

ճեցի, մարդկանց, կանանցն ի Բիայնայ (Վան) ես տարայ այս տարի...»¹։ Արդ արձանագրութեանս Կուսերուհի անունը համարեա թէ Գիմմիրը—Կիմմէրն է։ Աչքի է ընկնում և այն հանգամանքը, որ այդ երկերը յիշուում է մի ուրիշի հետ, որ Նիրակն է համարուում։ Ժամանակաբանութիւն էլ յարմարւում է, որովհետեւ արձանագրութեանս Ռուսան, Սարգսուրի որդին, Ռուսա Ա. է, որ իշխում էր Բ. դարու յերջին քառորդում (730—714)²։

Գիտելու է և այն, որ արձանագրութեան մէջ Կուսերուհի երկրից անմիջապէս առաջ յիշուում է Ուելի դա, որ յիշեցնում է մեր Ուլտիք—Օլթին։

Սեփան Կոնայեանց.

11 Մարտի 1910.

ՀԱՅԵՐԷՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Մորտել.

Ղարաբաղի բարբառով կը նշանակէ «կրծել, կրծելով ուտել»։ Օր. Մուկր լախար է մարտում։ Յեղակից է սանակրիա mord «պառուել», լաա. mord-ere, Ֆրանս. mord-re «կծել, խածնել» բառերուն։ Ինչպէս MSL 15, 245 ևս նկատած եմ կուլայ—սանս. gōla, մկմոլ—ռուս. моль, մոլ—սանս. mūla «արմատ», կոլ—լաա. gula «կոկորդ» բառերուն առթիւ, այսպիսի ստուգաբանութիւնները կը ցուցնեն, թէ մեր դաւառական բարբառներն ալ ունին այնպիսի ընտիր հայերէն արմատական ձևեր, որոնք ուղղակի կը կապուին հնդեւրոպական նախնեզունին, և հետեաքար պատահմամբ միայն գործածուած չեն հին հայ գրականութեան մէջ։

2. Տղացկան.

Արեւմտեան կոչուած բարբառներուն մէջ գործածական է

1. Էփրիկեան. Բնաշխարհիկ բառ տ. բառս «Ալաշալու»։

2. S. Weber, Die Kathol. Kirche in Armenien, §1, էջ 6, Freiburg im Breisgau 1903։

«Ծննդեան» նշանակութեամբ և զանազան ձևերով: Ինչպէս
 հղացկան (Ակն, Ատափաղար, Ատանա, Արաքէեր, Բաչարգիւղ,
 Եւդոկիա, Մոււշ, Մաշկերտ, Շապին-Գարահիսար, Չարսանձաք,
 Պօլիս, Սեբաստիա, Աթանօս, Տրապիզոն, Քդի), հղոցկան (Ա-
 խալցիտա, Բաղէշ, Նոր-Նախիջևան, Սուչաւա), հղոռկան (Սիւլ-
 րիհիսար): Քանի մը տարի առաջ Պօլսոյ թերթերուն մէջ երե-
 ցան զանազան գրութիւններ, որով այս բառը կստուգաբա-
 նէին հղայ ձգան—տղայ ձգող, որով և կը գրէին հղաձգան: Ըստ
 իս այս ստուգաբանութիւնը և հետեւաբար նոր ուղղագրու-
 թիւնը կեղծ է: հղայ ձգել «երեխայ ծնել» ո՞՞ մը չկայ մեր մէջ՝
 նոյն իսկ անարգական իմաստով: Բառը կազմուած է ացկան-
 եցկան մասնիկով, որմէ ունինք նաեւ մուրացկան «մուրացող»,
 ուրացկան (Խարբերդ) «ուրացող, հաւատուրաց», ուսեցկան
 (Խարբերդ) (լաւ ուսող», զնացկան (Երևան, Ղարաբաղ) «հո-
 սանուտ, հոսող, դիմացկան (Ղարաբաղ) (ուրիշ տեղ դիմաց-
 կուն) «լաւ դիմացող, ամուր»:

3. Տ ու ա յ ր .

Միւլթար Գօշի Դատաստանագրքին մէջ դործածուած բառ
 մըն է և կը նշանակէ «փեսին առած նուէրը հարսին»: Առհա-
 սարակ մեկնուած է մեր մէջ իբր սուայր «այր մարդուն
 տուածը»: Պետերսէն, Հայ, գրացի լեզուներ, էջ 197 նոյն
 բառը կը մեկնէ սուար, սաւար բառէն: Սակայն երկուքն ալ
 սխալ են: Տուայր փոխառութիւն է ֆրանս. douaire բառէն
 «ամուսնոյն կողմէն կնոջ կտակուած ինչք՝ այրի մնացած ժա-
 մանակ ապրելու համար». ֆրանս. բառը ըստ օրինի կը կար-
 դացուի տաւա, բայց նաեւ տաւո. հին արտասանութեամբ
 տուայո էր՝ մեր ձևին համեմատ:

4. Ա ն կ ա ն .

Անկան կամ անգան մէկ անգամ դործածուած է Ս. Գրքի
 մէջ (Թիւք Ժա 8), «սանդ» նշանակութեամբ: Լադարդ, Arm.
 stud. 112 կը համարէ փոխ առնուած ասոր. aggānā, բիր. aggān.
 արաբ. ʿajjāna, injāna, եթովպ. aigan, ասորեստ. agannu «կոնք,
 լազան» բառերէն: Հիւրչման չընդունիր այս մեկնութիւնը՝
 նշանակութեան փոքր տարբերութեան պատճառաւ: Բայց
 տարբերութիւնը կը վերնայ, երբ նկատենք Խիւր. անգանու
 «պնակ» բառը, որուն համեմատ կուգան նաեւ մեր դաւառա-
 կանները. անգանակ (Ադուլիս, Երևան), անկին (Կարին, Քդի)
 «կաւէ տաշտ, որուն մէջ լուացք կընես, խմոր կը շաղուեն

և կամ կը լողնան», իննան (խիան) «հողէ շինուած տաշա»:

5. Շահապ.

Շահապ «անստոյգ բոյս մը». Ամբրտովլաթ. մանրամասն նկարագրութիւնը տես Հայբուսակ 2244: Արաբ. Շահապ կը նշանակէ «գորշախայա», Շահաբ «հրագոյն, ատրաշէկ». նոյն արմատէն ա՛րեւմ. և Շահիբ ի մէջ այլոց կը նշանակեն նաև «տեսակ մը յամբար ծաղիկ». տես Դամուս, Թրք. Թարգմ. Ա. 176:

6. Շահառապ.

Շահառապ «յառաջամարտ, նախադարձակ» լիով առնուած է պահլաւ. * Շահառապ կամ սառանեան պահլաւ. * Շահառապ բառէն, իբր կազմուած Շահր «քաղաք» և ակիլիզան «արշաւել» բառերէն, «քաղաքի վրայ արշաւող». հմմտ. ասպասակ, ցահասակ:

7. Շադ.

Շադ «ցօղ, խոնաւութիւն, շիթ, կաթիլ». ասոր երկրորդ արմատն է Շոդ որ կերեայ Շոդիք «չործունք, թուք» բառին մէջ. կը համեմատուի լազ. Շոլ «թրջել», դովոնոլի «թրջեցի», Շոլերի «թաց, խոնաւ». ըստ այսմ թաթար. Շիլգէյ, Շուլագայ «չողիք» պատահական նմանութիւն ունի միայն:

8. Շամդիտակ.

Վերև ծաղիկ յիշուած է Ագաթանգեղոսի մէջ՝ յատմիկի, նարիկէսի և մանուշակի հետ: Կը համեմատուի պրս. Շամիիդ «ծաղիկ իմն անուշահոտ» բառին հետ. երկուքը միասին կենթադրեն պահլաւերէն * Շամիէսակ:

9. Շառ. շարաւանդ.

Կաշառ բառին ստուգաբանութեան մէջ վրդն, ել. կըսէ «... ստուգաբանի կայ Շառ, որ է ամբոխ և խռովութիւն և շարաւանդ ոտից»: Առկէ կը հետևի, թէ Շառ կը նշանակէ 1. ամբոխ, խռովութիւն (=պրս. արաբ. Շառռ) և 2. ստքի կապ: Վերջին իմաստը նկատուած չէ, ուստի նոր հայերէն բառ մըն է, որ բառարաններուն մէջ պէտք է անցունել: Այս բառին կրնանք կցել Շարաւանդ. հոտուգաբանուի պրս. Շա՛ր «պատուաւ, շղարշ» և բանդ «կապ բառերով»:

10. Շարփուլ:

Շարփուլ «տեսակ մը գլխարկ, խոյր»։ փսխ առեալ է պրոսարփուլ «գլխարկ. ծածկոց» բառէն:

11. Շեպ:

Շեպ «շեղ, զառելիւյր տեղ» վեցօր. — պրոս. շէք «զառելիւյր, խորդուրորտ գետին»:

12. Շկօթակ:

Շկօթակ կը գործածուի միայն Եկօթակ առնել «աքսորել» ոճին մէջ: Պարսկերէն ունինք Եփաֆա, որ ըստ օրինի կուտայ հայերէն Եկաթակ-Եկօթակ, կը նշանակէ «խեղանդամ դարձած»: Հին օտմորութեամբ, ինչպէս նաև այժմ Պարսկաստանի մէջ, յանցաւորներուն տրուած պատիժներէ մէկն ալ խեղանդամ դարձնելն էր, ինչպէս օրինակ՝ քիթը կտրել, մէկ թեք կամ մէկ ոտքը կտրել են: Կերևայ, թէ արքորականներն ալ՝ արքոր երթալէ առաջ՝ ենթարկուած էին նոյնպիսի պատժի, որով երկու նշանակութիւնները իրարու հետ միացած են:

13. Շղուարարոյ:

Յովհ. Մանդ. և Յովհ. Կաթ. ունին Եղուարարոյ, Եղուրղարարոյ, Եուաղարարոյ, Եուարարոյ, Եեղարարոյ ձևերը, որ Հայկադեան բառարանը մերձաւորապէս կը մեկնէ «թեթեամիտ, կեղծաւոր, վայրենամիտ և այլն»: Իմաստի պարզութեան համար նկատելի առնելու է վրաց. Ելու «խենթ, յիմար» բառը, որով վերի ձևերը կը մեկնուին իբր «խենթի բարձր կամ բնութիւն ունեցող, յիմարաբարոյ»:

14. Շորիկ:

Այս բառը կը գործածէ մէկ անգամ Բուզանդ Գ. 20. «Այս բանին յունին զօրավարին պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոգմոգն տիրանենդն Փիսիկայ»: Բառին իմաստը լաւ պարզուած չէ. նոր Հայկադ. բառ. կը մեկնէ «խելաշուրջ և թափառական». ըստ իս կը նշանակէ «խառնակիչ, խռովարար կամ խենթ», ինչպէս կերևայ հետեւեալ պարսիկ բառերու համեմատութեամբ. Եո՛ր «շփոթութիւն, խռովութիւն, ձախող», Եո՛րմո՛ր «կադ և կռիւ, անարգ, չնչին, նուաստ», Եո՛րի՛ղան «պղտորել, խենթենալ, խելացնոր լինել», Եո՛րի՛ղա «խառնակ, խենթ, խելացնոր»:

13. Որեաք

Որեաք «մարդիկ» բառին վրայ դանազան մեկնութիւններ ձգած են. երբեմն համեմատուած է իւր ստացականին հետ, երբեմն որ յարաբերականին հետ, երբեմն ուրնի իգականի մասնիկին հետ և այլն: Ըստ իս եաք յոգնակիի մասնիկով կազմուած բառ մըն է, ինչպէս կը ցուցնեն նոյն բառին կրկնակները՝ որեք (շնորհ. թղթ. եդես.), օրեք (Սարգ. շնորհ. ք. յհ.) կամ որեանք օհ. կթ. (եան յոգնականակերտ մասնիկով): Բառին արմատականն է որ «մարդ», որուն հետ կը համեմատուի վրաց. երի, հերի «մարդիկ ժողովուրդ»: Այս մեկնութեամբ՝ մէկով կաւելնայ այն սակաւաթիւ օրինակներու թիւը (վանեար, նավկեար ևլն), որով կապացուցուի, թէ աշխարհաբարի եր յոգնականակերտ մասնիկը հին գրաբարի մէջ ալ գոյութիւն ունէր:

Յիշեալ որ-էն տարբեր է որ, ուր արմատը, որմէ Ե և ոյն մասնիկներով ձևացած են որո՞, որի՞, ուրի՞, որոյն և ուրոյն:

2. Ածական.

(Շարունակելի).

Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (2. Էջերախ)

(Вѣстникъ Воспитанія № 8)

Դասերը վերջանալուց յետոյ Կենդանագործքը Մերկերին առաջարկեց ընտրութիւն անել 11-ից մինչև երկուսը տանը լինել կամ տաք ուսումնարանում նստարանների վրայ ազատ քնել: Եղբայրները կասկած չկայ «տուն գնալ» չէին ցանկայ. դրա համար էլ մնացին դասարանում:

Կենդանագործքը փակեց դասարանը նրանց վրայ ու բանալիքը իր հետ վերցրեց, «որպէս զի նոցա քունը չը խանգարեն» ինչպէս ինքն էր բացատրում նրանց: Խանգարել երեխաների քունը հնարաւորութիւն չկար. երկրորդ դասից յետոյ էլ նոքա գեռ չէին արթնացել, չորրորդ դասն էլ անցաւ, բայց նոքա գեռ քնում էին և հազիւ հազ կարողացան դարթնիլ: Բաց երկնակամարի տակ, սայլերի վերայ, չաւարտած շինութիւններէ մէջ գիշերողների համար տաք վառարանի մօտ, առանց անկո-